Doi: 10.56737/2953-7843-2025.08-16

ԱՎԱԳ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
*Պատմական գիտ. թեկնածու*

# ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ 1999–2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (ԸՍՏ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ)

*Սկիզբը՝ թիվ Ը.*

## «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳԻՐԸ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ՀԱՐԹԱԿ

*Գարեգին Բ. Վեհափառի գահակալության սկզբից ամսագիրն ավելի աշխուժացրեց եւ առավել բարձր մակարդակի հասցրեց հրապարակվող գիտական աշխատանքների որակը եւ անհամեմատ մեծացրեց թվաքանակը: Եւ, իհարկե, առանձնահատուկ ուշադրության կենտրոնում էր Հայոց ցեղասպանության եւ Հայկական հարցի թեման:*

*Ուշագրավ է, որ թեմայի վերաբերյալ հրապարակումները հաճախ հրատարակվում էին համապատասխան խորագրերի ներքո, օրինակ. «Նվիրվում է Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին», «Վկայում են վավերագրերը», «Վերապրողի հուշերից», «Ապրիլի 24», «Եղեռնի 85-ամյակ», «Խրիմյան Հայրիկ – 180»:*

*Նախ եւ առաջ, ամսագրում հրապարակված նյութերից հատուկ առանձնացնենք Գարեգին Բ. Վեհափառի գործունեության վերաբերյալ նյութերը[1], որոնք ինչպես թեմայի, այնպես էլ ընդհանրական առումով գնահատելի նշանակություն ունեն:*

*Մինչ գիտական հոդվածներին անդրադառնալը, ներկայացնենք քարոզչական հրապարակումները. Ս. էջմիածնի միաբանների քարոզները[2],*

---

[1] *Տե՛ս* ԱՐԱՐԱՏ ՔՀՆ. ՊՈՂՈՍՅԱՆ, *Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի 2010–2019 թթ. գործունեության համառոտ տարեգրություն, 2019, թ. 11, էջ 8–94:* Ա. ՔԱԼԱՇՅԱՆ, *Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Մեծ եղեռնի մասին, 2019, թ. 11, էջ 100–118:* Լ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, *Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի մշակութախնամ ազգանվեր գործունեությունը (2000–2019), 2019, թ. 11, էջ 119–148:* Ա. ՋԱՆԹԻԿՅԱՆ, *Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջեկեղեցական եւ էկումենիկ գործունեությունը (2000–2019), 2019, թ. 11, էջ 149–175:*

[2] *Տե՛ս Վարդան աբեղա Նավասարդյանի քարոզը՝ խոսված Ս. էջմիածնի Մայր տաճարում Հայոց Մեծ եղեռնի 88-րդ տարելիցի առիթով, 2003, թ. 3–4, էջ 89–90: Արշակ վարդապետ*

*Մայր Աթոռում[3] եւ Սփյուռքի թեմերում[4] ցեղասպանության ոգեկոչման միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունները։*

*Առանձին պետք է հիշատակել «Էջմիածին» ամսագրում թեմայի մասին հրապարակումների վերլուծության վերաբերյալ հոդվածները[5]։*

*Գիտական տեսանկյունից նորույթ են եւ բավականին հետաքրքրաշարժ եկեղեցական կառույցների գործունեության վերաբերյալ հոդ-*

---

*Խաչատրյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր տաճարում Մեծ եղեռնի 89-րդ տարելիցի առիթով մատուցված Ս. Պատարագին, 2004, թ. 4, էջ 39–42։ Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր տաճարում ապրիլի 24-ին մատուցված Ս. Պատարագին, 2008, թ. 4, էջ 16–18։ Արտակ եպիսկոպոս Տիգրանյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր տաճարում Հայոց ցեղասպանության հիշատակի օրվա կապակցությամբ, 2013, թ. 4, էջ 16–17։ Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր տաճարում Հայոց ցեղասպանության հիշատակի օրվա կապակցությամբ, 2014, թ. 4, էջ 13–16։ Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր տաճարում Երեւման Սուրբ Խաչի տոնին եւ Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին մատուցված Ս. Պատարագին, 2016, թ. 4, էջ 23–25։ Թովմա վարդապետ Խաչատրյանի քարոզը՝ խոսված Ս. Գայանե վանքում Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների տոնի առիթով, 2019, թ. 4, էջ 30–33։ Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի քարոզը՝ խոսված Կրկնազատկի տոնին Ս. Գայանե վանքում մատուցված Ս. Պատարագին, 2022, թ. 4, էջ 27–30։ Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյանի քարոզը՝ խոսված Ս. Գայանե վանքում մատուցված Ս. Պատարագին, 2024, թ. 4, էջ 13–16։*

*[3] Տե՛ս Ապրիլյան պատերազմի նահատակների հիշատակի ոգեկոչումը Ծիծեռնակաբերդում եւ Ս. Էջմիածնում, 2002, թ. 4, էջ 3։ Ապրիլի 24-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, 2003, թ. 3–4, էջ 65։ Այցելություն Ծիծեռնակաբերդ եւ Սուրբ Պատարագ Մայր Աթոռում՝ ի հիշատակ Ապրիլյան նահատակների, 2004, թ. 4, էջ 13։ Հայոց Մեծ եղեռնի իննսունամյա տարելիցի ոգեկոչման հանդիսություններ Ս. Էջմիածնում եւ Հայոց Եկեղեցում, 2005, թ. 4, էջ 18–53։ Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչումը Ծիծեռնակաբերդում։ Ապրիլի քսանչորսը Մայր Աթոռում, 2006, թ. 4, էջ 14։ Հայոց Մեծ եղեռնի ոգեկոչումը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում։ Հոգեհանգստյան արարողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, 2007, թ. 4, էջ 14–15։ Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչումը Մայր Աթոռում, 2008, թ. 4, էջ 4։ Ապրիլի 24՝ Հայոց Եղեռնի զոհերի հիշատակի օր, 2010, թ. 4, էջ 27։ Ապրիլի 24՝ Սուրբ Հարության տոն եւ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր, 2011, թ. 4, էջ 153–154։ Ապրիլի 24-ը՝ Հայոց եղեռնի զոհերի օր, 2012, թ. 4, էջ 145–146։*

*[4] Օրինակ՝ տե՛ս Հայկական ցեղասպանության ոգեկոչման ձեռնարկ, 2004, թ. 4, էջ 127։ Սուրբ Պատարագ եւ հոգեհանգիստ հայ նահատակներուն համար, 2004, թ. 4, էջ 128–129։ Ապրիլի 24-ի ոգեկոչումը Վիրահայոց թեմում, 2006, թ. 4, էջ 130–132։ Հայոց ցեղասպանության ոգեկոչումը Գերմանիո հայ համայնքներում, 2006, թ. 4, էջ 133–134։ Ի յարգանս Ապրիլեան նահատակաց, 2006, թ. 4, էջ 135։ Հայոց ցեղասպանության ոգեկոչումը հնդկահայ գաղութում, 2006, թ. 4, էջ 141։ Հայոց ցեղասպանության 91-րդ ամեակին ոգեկոչումը Դամասկոսի մէջ, 2006, թ. 4, էջ 142–144։* Շ. Արծիւեան, *Հանդիսաւոր յիշատակութիւն Հայկական ցեղասպանութեան Պաղտատի մէջ, 2006, թ. 4, էջ 145–149։ Ջատկական Ս. Պատարագ եւ հոգեհանգստյան հիշատակ Մեծ եղեռնի անմեղ զոհերի ի Ցյուրիխ, 2011, թ. 4, էջ 151–152։ Ապրիլեան նահատակաց ոգեկոչման օրը Ռումինիայի հայոց թեմում, 2012, թ. 4, էջ 146–147։*

*[5] Տե՛ս* Ս. Զաքարյան, *Հայրենիքի եւ հայրենասիրության թեման «Էջմիածին» ամսագրում, 2020, թ. 12, էջ 34–44։* Ա. Ֆիշենկճյան, *Մեծ հայրենադարձության թեմայի արծարծումը «Էջմիածին» ամսագրում, 2020, թ. 12, էջ 145–155։*

*վածները[6]։ Իհարկե, այս հանգամանքը բնականաբար պետք է վերագրել նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոսների եւ Կոմիտաս վարդապետի[7] գործունեության եւ դիրքորոշման բացահայտմանը միտված հոդվածներին[8]։ Եւ ի հավելումն, Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի[9] գործունեության վերաբերյալ եւ հատկապես Ռոբերտ Թաթոյանի հոդվածները[10]։*

*Անշուշտ, արժեքավոր են ցեղասպանության եւ հայոց պահանջատիրության տեսա-մեթոդաբանական, իրավական եւ աղբյուրագիտական*

---

[6] *Տե՛ս* Ս. Ստեփանյանց, *Փետրվարյան հեղափոխությունը եւ Հայ Եկեղեցին, 2004, թ. 5, էջ 100–112, Հայ Եկեղեցու հարաբերությունները այլ հարանվանությունների հետ Առաջին աշխարհամարտի տարիներին, 2011, թ. 5, էջ 74–81։* Լ. Թումանյան, *Լիմ եւ Կտուց մենաստանները Մեծ եղեռնի օրերին, 2013, թ. 4, էջ 96–107։* Ա. Եփրիկյան, *Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի գործունեությունն առաջին աշխարհամարտի տարիներին, 2015, թ. 4, էջ 56–67։* Ա. Մալոյան, *Մայր Աթոռ Ս. Էջմիածինը եւ Մեծ եղեռնի նահատակների հիշատակի հավերժացումը, 2019, թ. 4, էջ 143–154։* Վ. Հարությունյան, *Կիլիկիո Կաթողիկոսությունը Մեծ եղեռնի տարիներին եւ Սահակ Բ. Խապայանի գործունեությունը, 2018, թ. 11, էջ 100–117, Հռոմի Բենեդիկտոս ԺԵ. Պապը եւ Հայոց եղեռնը, 2018, թ. 4, էջ 89–103, 1909 թ. կոտորածները եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, 2020, թ. 5, էջ 82–98։* Ա. Հարությունյան, *Ս. Էջմիածնի կաթողիկոսարանը եւ հայ գաղթականների հոգեւոր-մշակութային արժեքների փրկության հարցն Առաջին աշխարհամարտի տարիներին, 2020, թ. 12, էջ 50–62, Առաջին աշխարհամարտի հայ գաղթականության հանգրվանումը Վաղարշապատում եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, 2021, թ. 10, էջ 102–123։*

[7] *Տե՛ս* Խ. Բադիկյան, *Կոմիտաս վարդապետ, 2000, թ. 2, էջ 93–107, Կոմիտասը աքսորում. 1915 թվական, 2005, թ. 4, էջ 86–99։*

[8] *Տե՛ս* Է. Կոստանդյան, *Արեւմտահայությունը եւ Մկրտիչ Խրիմյանը (1895–1896), 2000, թ. 4, էջ 55–63։* Ա. Ղազիյան, *Գեւորգ Ե. Կաթողիկոսի հայրապետական գնահատությունը Անատոլ Ֆրանսին, 2003, թ. 3–4, էջ 170–173։* Գ. Խուդինյան, *Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին եւ հայ ազգային կուսակցությունները 1889–1891 թվականներին, 2003, թ. 7, էջ 75–79։* Վ. Պողոսյան, *Հայ ժողովրդի եւրոպացի նվիրյալները Գեւորգ Ե. Կաթողիկոսի գնահատմամբ, 2010, թ. 4, էջ 95–101։* Ք. Հայրապետյան, *Տ. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի հասարակական-քաղաքական գործունեությունը Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին (1918–1920 թթ.), 2018, թ. 5, էջ 90–105։ Ա. Մելիքյան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանցի ազգանպաստ գործունեությունը, 2024, թ. 9, էջ 117–133։* Ս. Պողոսյան, *Գեւորգ Ե. Կաթողիկոսի եւ Պողոս Նուբարի նամակագրությունը, 2013, թ. 4, էջ 45–59, Գէորգ Ե. Սուրենյանցը եւ Միացյալ Հայաստանի հարցը Առաջին աշխարհամարտի տարիներին, 2018, թ. 7, էջ 84–100։*

[9] *Տե՛ս* Ս. Մանվելյան, *Հայոց ազգային սահմանադրության եւ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքության վերացման երիտթուրքական քաղաքականությունը Առաջին աշխարհամարտի տարիներին, 2019, 3, էջ 120–130։*

[10] *Տե՛ս Մեծ եղեռնի ընթացքում արեւմտահայության կրած մարդկային եւ նյութական կորուստները վիճակագրելու Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի փորձերը 1919–1920 թթ. (ըստ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի արխիվի նյութերի), 2019, թ. 4, էջ 63–80, թ. 5, էջ 53–86։ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի՝ արեւմտահայությանը վիճակագրելու 1914 թ. ձեռնարկները, 2024, թ. 7, էջ 94–109, թ. 8, էջ 65–77։*

*հոդվածները*[11]*: Այս պարագան վերաբերում է նաեւ ցեղասպանության իրականացման գործիքակազմի բացահայտման ու ընթացքի ներկայացման վերաբերյալ հոդվածներին*[12]*:*

*Ամսագիրը մշտապես կարեւորել է ազգային-ազատագրական շարժման եւ ինքնապաշտպանական մարտերի*[13]*, այդ պայքարի եւ պետական գործիչների վերաբերյալ*[14] *ուսումնասիրությունները:*

---

[11] *Տե՛ս* Է. Դանիելյան, *Մեծ եղեռն՝ սեւ էջ հայոց պատմության մեջ, 2000, թ. 4, էջ 36–44:* Ա. Հարությունյան, *Պանթուրքիզմը եւ Հայոց Մեծ եղեռնը, 2000, թ. 4, էջ 45–54:* Ս. Մուրադյան, *Թուրքական արխիվներում Հայոց ցեղասպանության վերաբերող վավերագրերի գոյության հարցի շուրջ, 2005, թ. 4, էջ 128–133:* Շ. Խաչատրյան, *Ինչպե՞ս դիտարկել ցեղասպանությունն աստվածաբանական տեսանկյունից, 2012, թ. 12, էջ 7–21:* Ադամ քհն. Մակարյան, *Ցեղասպանություն եւ Աստվածային Հայտնություն, 2013, թ. 4, էջ 18–32:* Դ. Գյուրջինյան, Հայասպանություն *բառի պատմալեզվաբանական քննությունը, 2016, թ. 4, էջ 99–113:* Ս. Մարգարյան, *Հայոց ցեղասպանության ծրագրման եւ իրականացման պայմանների քաղաքակրթական վերլուծության փորձ, 2018, թ. 4, էջ 104–130:* Ա. Սարգսյան, *Հայոց ցեղասպանությունն ինքնության խնդրի համապատկերում, 2020, թ. 2, էջ 46–66, Հայոց ցեղասպանության իմաստավորման հարցը, 2020, թ. 4, էջ 125–134:* Ս. Պարսամյան, *Հայկական պահանջատիրության փաստաթղթային հիմքերը. օսմանահպատակ հայ քաղաքացիների մասնավոր եւ համայնքապատկան ունեցվածքի կալվածքագրերը, 2022, թ. 4, էջ 77–107:*

[12] *Տե՛ս* Ա. Ներսիսյան, *Իրավիճակը Տարոնում եւ Սասունում 1915 թ. ջարդերի նախօրյակին, 2006, թ. 4, էջ 81–90:* Հ. Հարությունյան, *Մեծ եղեռնի տարիներին հայ մանուկների նկատմամբ կիրառված բռնությունները, 2015, թ. 4, էջ 44–54:* Ա. Բասենցյան, *Օսմանյան պետական կառույցների եւ զինված կազմավորումների փոխգործակցությունը Հայոց Մեծ Եղեռնի ընթացքում, 2018, թ. 4, էջ 131–141:* Ռ. Սուքիասյան, *1915 թ. Սեբաստիայի տեղահանությունը, 2019, թ. 3, էջ 131–145, Ժանդարմների հանցավոր անգործությունը Քյոթու Խան-Հասան Չելեբի-Հեքիմ խան երթուղու վրա, 2019, թ. 4, էջ 135–142:* Ս. Պարսամյան, *Օսմանյան բանակի ներգրավվածությունը հայկական բնակավայրերի եւ հուշարձանների ոչնչացման գործում՝ Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի նահանգների օրինակով (1915–1918), 2021, թ. 4, էջ 66–80, թ. 5, էջ 107–118:* Հ. Ավրյան, *Տրապիզոնի նահանգի հայության ցեղասպանությունը, 2024, թ. 4, էջ 74–94:*

[13] *Տե՛ս* Կ. Առաքելյան, *Հայ հոգեւորականությունը եւ ֆիդայական շարժումը, 2005, թ. 9, էջ 85–92:* Հ. Բաղումյան, *Հայկական կամավորական խմբերի մասնակցությունը կովկասյան ռազմաճակատի մարտական գործողություններին, 2007, թ. 4, էջ 78–96:* Ա. Կարապետյան, *Մի դրվագ զինատար շարժման պատմությունից, 2009, թ. 3, էջ 159–162:* Ա. Բալյան, *Արարատյան ջոկատի առաջին երթը, 2010, թ. 4, էջ 85–94:* Ա. Եփրիկյան, *Գողթնի 1919 թ. ինքնապաշտպանությունը, 2012, թ. 7, էջ 104–110:* Կ. Հակոբյան, *Թորգոմի «Որսկան» խումբը եւ նրա ազդեցությունը ազատամարտի հետագա մարտավարության վրա, 2013, թ. 8, էջ 54–69:* Հ. Սիմոնյան, *Կամավորական շարժման սկզբնավորումը եւ արեւմտահայ քաղաքական միտքը, 2013, թ. 8, էջ 92–98:* Մ. Բեժանյան, *Մարաշի 1920 թ. ինքնապաշտպանությունը եւ հայ լեգեոնականները, 2015, թ. 4, էջ 68–75:* Հ. Նազարյան, *Հայկական առանձին բանակային կորպուսի Երեւանյան զորաջոկատի շտաբի գործունեությունն Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի շենքում 1918 թվականի գարնանը, 2021, թ. 3, էջ 97–118:*

[14] *Տե՛ս* Ռ. Համբարձումյան, *Գարեգին Նժդեհ – Ղարաքիլիսայի հրաշունչ ոգին, 2004, թ. 5, էջ 79–99:* Ա. Ներսիսյան, *Արամ Մանուկյանը եւ հայոց նոր պետականության արարումը, 2007, թ. 5, էջ 140–149:* Հ. Օհանյան, *Դրոյի ռազմաքաղաքական գործունեությունը 1918 թ.*

*Անտարակույս, աղբյուրագիտական անգնահատելի նշանակություն ունեն ամսագրում հրապարակված հուշագրությունները*[15]*:*

*Պետք է կարեւորել եւ արժանիորեն գնահատել թեմայի պատմագրության վերաբերյալ հետազոտությունները*[16]*: Այս հանգամանքը հատկապես վերաբերում է Վարուժան Պողոսյանի հոդվածներին*[17]*:*

*Ցեղասպանության թեման ուշադրության կենտրոնում պահելով հանդերձ, ամսագիրը զուգահեռ բազմաթիվ հրապարակումներով հարստացրել է Հայկական հարցի քաղաքական ճակատագրի պատմագիտական հետազոտությունը*[18]*:*

---

*հայ-վրացական պատերազմի ժամանակ, 2012, թ. 2, էջ 100–107:* Հ. Պետրոսյան, *Գեղամ Տեր-Կարապետյան (Մշո Գեղամ), 2012, թ. 8, էջ 107–119, Սեյդո Պողոս, 2014, թ. 6, էջ 71–86:* Յ. Հովհաննիսյան, *Սամսոն Տեր-Պողոսյան, 2013, թ. 6, էջ 105–112:* Ա. Ջանթիկյան, *Սարգիս Կուկունյան, 2013, թ. 10, էջ 104–110:* Ա. Ասրյան, *Արամ Մանուկյանի պետական գործունեությունը, 2014, թ. 2, էջ 50–68:*

[15] *Տե՛ս* Դ. Քերթմենջյան, *էջեր իմ օրագրից, 2001, թ. 4, էջ 63–64:* Զ. Եսայան, *Ավերակների մեջ, 2003, թ. 3–4, էջ 161–164:* Ս. Բեհբության, *Ինչպե՞ս եւ ե՞րբ հաստատվեց ապրիլի 24-ը Մեծ եղեռնի նահատակաց հիշատակի օր, 2003, թ. 3–4, էջ 165–169:* Ա. Ռշտունի, *Անցյալի անմար այրող հուշերը, 2003, թ. 3–4, էջ 174–175:* Ե. Օտյան, *Անիծյալ տարիներ, 2004, թ. 4, էջ 95–104:* Պ. Սիւրմէնեան, *Յուշեր Սողոմոն Թեհլերեանի մասին, 2005, թ. 4, էջ 139–140:* Վարդան քհնյ. Տիւլկէրեան, *Հայաջինջ ցեղասպանութեան ճանաչումով մեղքը չի քաւուիր, 2005, թ.4, էջ 141–143:* Ավագ, *Տառապալից դառը հուշեր, 2005, թ. 4, էջ 144–147:* Պ. Հովհաննիսյան, *Հայկական հարցին աղերսվող Նիկողայոս Ադոնցի նորահայտ նամակները, 2010, թ. 11, էջ 105–111, Ն. Ադոնցի քաղաքական հրապարակախոսության էջերից, 2012, թ. 4, էջ 60–66:* Արարատ քհն. Պողոսյան, *Սասուն, կարոտ եմ քզի, 2012, թ. 4, էջ 83–87:* Мустафа Недим, Армянская резня, 2014, *թ. 9, էջ 54–98:*

[16] *Տե՛ս* Տ. Լոքմագյոզյան, *«Ակոս» թերթի տեսություն հայկական ցեղասպանության մասին, 2001, թ. 4, էջ 55–62:* Ա. Անդրանիկյան, *Թեոդիկի Եղեռնապատումը, 2005, թ. 4, էջ 106–117:* Ա. Դոլոխանյան, *Ֆրեդերիկ Ֆեյդիի բանախոսությունը Հայոց ցեղասպանության 50-ամյակի առթիվ, 2007, թ. 1, էջ 113–119:* Է. Ղուկասյան, *Հայկական հարցը եւ եղեռնը Ժան Մարի Մորգանի աշխատություններում, 2008, թ. 4, էջ 65–72:* Է. Մելքոնյան, *Հայոց ցեղասպանության պատմության գիտական հետազոտության սկզբնավորումը, 2014, թ. 4, էջ 144–153, ԺԹ. դարի 90-ական թվականների հայկական կոտորածների լուսաբանումը Մ. Ներսիսյանի ուսումնասիրություններում, 2014, թ. 11, էջ 70–85, 1915–1916 թվականների Հայոց ցեղասպանության լուսաբանումը Մ. Ներսիսյանի ուսումնասիրություններում, 2015, թ. 8, էջ 69–81:* Տ. Հակոբյան, *Աբդուլհամիդյան ժամանակաշրջանի կրթության լուսաբանումը թուրքական պատմագրության մեջ, 2018, թ. 5, էջ 76–89:*

[17] *Տե՛ս Համիդյան կոտորածները եւ հայր Շաբմետանը, 2002, թ. 4, էջ 72–80, Համիդյան կոտորածները եւ աբբա Պիզանին, 2003, թ. 3–4, էջ 139–146, Համիդյան կոտորածները եւ Պիեռ Քիյառը, 2004, թ. 4, էջ 55–67, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունը Պիեռ Քիյառի գնահատմամբ, 2005, թ. 1, էջ 97–104, Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագրության լուսաբանմամբ, 2005, թ. 4, էջ 148–154, Հայոց ցեղասպանության Ռենե Պինոնի հայեցակարգը, 2013, թ. 4, էջ 87–95:*

[18] *Տե՛ս* Խ. Սամվելյան, *Ավետիս Ահարոնյանը եւ Սեւրի դաշնագիրը, 2000, թ. 9, էջ 90–97:* Ա. Սարգսյան, *Հայկական հարցը եւ Կ. Պոլսի պատրիարքությունը 19-րդ դարի 70-ական թվա-*

*Ի պատիվ ամսագրի՝ հարկ է նշել, որ նրա ուշադրությունից չի վրիպել նաեւ ցեղասպանության ուսումնասիրման գրականագիտական եւ մշակութաբանական տեսակետները[19]:*

*Նշյալը վերաբերում է նաեւ օտար հեղինակների ուսումնասիրությունների հրապարակմանը[20]:*

*Հայոց ցեղասպանության եւ Հայկական հարցի վերաբերյալ վերոնշյալ թեմատիկ-բովանդակային հրապարակումներից զատ՝ նաեւ ներկայացնենք ամսագրի՝ հիմնականում մշտական դարձած հեղինակների աշխատանքները:*

*Առանձնակի ներկայացնենք Վան-Վասպուրականի հայության վարչաքաղաքական եւ կրոնական դրության, ինքնապաշտպանության, կո-*

---

*կաններին, 2000, թ. 11, էջ 102–113:* Ս. ՊՈՂՈՍՅԱՆ, *Հայաստանի ինքնավարության ծրագրերը Սան Ստեֆանոյի եւ Բեռլինի կոնֆերանսների նախօրեին, 2007, թ. 4, էջ 36–48:* Ա. ԲԱԼՈՅԱՆ, *Հայ Առաքելական Եկեղեցին եւ 1913–1914 թթ. հայկական բարեփոխումների ծրագիրն ըստ իտալական դիվանագիտական փաստաթղթերի, 2007, թ. 4, էջ 49–58:* Հ. ԱՍՄԱՐՅԱՆ, *Հայկական հարցը Սան Ռեմոյի վեհաժողովում, 2010, թ. 1, էջ 145–151:* Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, *Հայկական բարենորոգումների երեք նախագծերը եւ ռուսական դիվանագիտությունը 1913 թ., 2010, թ. 9, էջ 62–68:* Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, *Խորհրդային Հայաստանի պատվիրակությունը 1921 թ. Մոսկվայի կոնֆերանսին պատրաստվելու շրջանում, 2011, թ. 4, էջ 94–105:* Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, *Ֆրանսիայի դերակատարումը Կիլիկիայի հիմնախնդրի «լուծման» գործում, 2022, թ. 4, էջ 123–136:* Ա. ՀԱՅՐՈՒՆԻ, *Հայ-ռուսական բանակցությունները Մոսկվայում եւ ձախողումը, 2024, թ. 2, էջ 105–124:*

[19] *Տե՛ս* Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, *Ցեղասպանությունը եւ հայ գրականությունը, 2000, թ. 4, էջ 26–35:* Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, *Դավանափոխության հիմնախնդիրը Սեյլանի «Հայթա-Ֆիրատ» վիպակում, 2010, թ. 4, էջ 62–69:* Ս. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ, *1894–96 թթ. ջարդերի հոգեբանական հետեւանքների դրսեւորումը Տ. Չյոկյուրյանի արձակում, 2012, թ. 6, էջ 88–99:* Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, *Ցեղասպանության վերհուշը Հ. Ասատուրյանի «Հովակիմի թոռները» վեպում, 2013, թ. 4, էջ 112–116:* Լ. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ, *Եղեռնը ճարտարապետության մեջ, 2013, թ. 5, էջ 98–101:* Ն. ՍԱՐԳՍՅԱՆ, *1894–96 թթ. ջարդերի պայքարը Տ. Չյոկյուրյանի նորավեպերում, 2013, թ. 7, էջ 107–113:* Վ. ՓԻԼՈՅԱՆ, *Եղեռնը Հրանտ Մաթեւոսյանի մտասեւեռումներում, 2014, թ. 6, էջ 104–112:* Մ. ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ, *Ցեղասպանության թեման Ի. դարի ռուս պոեզիայում, 2015, թ. 4, էջ 76–91:* ԳԵՒՈՐԳ ԵՊՍ. ՍԱՐՈՅԱՆ, *Շարականք նահատակության Մեծ եղեռնի, 2015, թ. 4, էջ 130–140:* Վ. ՄԱԿԱՐՅԱՆ, *Մեծ եղեռնի տարիներին կորստից փրկված արաբատառ ձեռագրերի մատենադարանային հավաքածուն, 2016, թ. 12, էջ 113–130:* Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, *Հայոց եղեռնը Մաղաքիա Օրմանյանի խոհագրության եւ Հրանտ Մաթեւոսյանի ստեղծագործության մեջ, 2020, թ. 4, էջ 117–124:*

[20] *Տե՛ս* Վ. ԲԱՈՒՄ, *Հույների տեղահանությունը մինչեւ պատերազմի վերջը, 2009, թ. 12, էջ 98–104, Քրիստոնյաների վիճակը Թուրքիայում Առաջին աշխարհամարտի ավարտին (1917–1918), 2010, թ. 3, էջ 136–147:* Հ. ԳՈԼՑ, *Յոհաննես Լեփսիուսի տուն-թանգարանի բացումը Պոտսդամում, 2004, թ. 1, էջ 120–123:* Բ. ՔՈՒՓԵՐ, Թ. ԱՔՉԱՄ, *Թուրքերը, հայերը եւ* «G-Word» *հասկացությունը, 2024, թ. 4, էջ 96–118, թ. 5, էջ 113–128:*

տորածների, գաղթականների վիճակի մասին Ավետիս Հարությունյանի[21], Գերմանիայի արտաքին քաղաքականության, հայ-գերմանական հարաբերությունների եւ մանավանդ Հ. Լեփսիուսի մասին Աշոտ Հայրունիի[22], առաջին աշխարհամարտին հայ զինվորականների մասնակցության մա-

[21] Տե՛ս Հայ գաղթականության տեղաբաշխումը եւ օգնության կազմակերպումը Արեւմտյան Հայաստանում Մեծ եղեռնի տարիներին, 2002, թ. 4, էջ 81–91, թ. 5, էջ 86–95։ Հայ գաղթականությունը Արեւելյան Հայաստանում Մեծ եղեռնի տարիներին, 2006, թ. 4, էջ 62–80։ Վան-Վասպուրականի առաջին ժամանակավոր կառավարությունը, 2007, թ. 5, էջ 110–119։ Պետրոգրադի գաղթականական համագումարը եւ նրա նշանակությունը, 2008, թ. 4, էջ 73–79։ Վանի նահանգապետության պարենային քաղաքականությունը, 2010, թ. 4, էջ 56–61։ Սեֆեր-Բերլիկը, Թեքեալիֆի Հարիպիեն եւ դասալքության խնդիրը Վան-Վասպուրականում 1914–1915 թթ., 2011, թ. 4, էջ 29–46։ Հայկական կոտորածները Վան-Վասպուրականի գավառներում, 2013, թ. 4, էջ 33–44։ Կոտորածների նախապատրաստական փուլը Վան-Վասպուրականում Մեծ եղեռնի տարիներին, 2014, թ. 4, էջ 60–80։ Դրվագներ Վանի նահանգի հոգեւոր-կրոնական եւ եկեղեցական կյանքից (1908–1918), 2015, թ. 4, էջ 116–128։ Վանքապատկան եւ եկեղեցապատկան կալվածքների բռնազավթման հարցը Վանի նահանգում, 2017, թ. 11, էջ 59–66։ Դրվագներ Ատրպատականի 1918 թ. հերոսամարտերից, 2018, թ. 6, էջ 64–87։ Հայկական կոտորածների նախապատրաստումը եւ ջիհադի գործադրումը Վանի նահանգում, 2020, թ. 1, էջ 58–74։ Վանի նահանգի հայությունը Բեքիր Սամիի նահանգապետության օրոք եւ արեւմտահայոց զինապարտության մասին օրենքը, 2023, թ. 1, էջ 129–141։ Իրադրությունը Վանի նահանգում 1915 թ. ապրիլի սկզբին. Ականցի, Արծկեի եւ Բերկրիի կոտորածները, 2024, թ. 9, էջ 66–83։

[22] Տե՛ս Յոհաննես Լեփսիուսի հայանվեր հրապարակախոսական եւ կազմակերպական գործունեությունն առաջին աշխարհամարտի տարիներին, 2003, թ. 3–4, էջ 147–158։ Մշտապես ուսանելի առաքելությունը, 2003, թ. 10–11, էջ 118–127։ Հայկական խնդիրը կայսերական Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թ. մարտ–հունիս ամիսներին, 2006, թ. 4, էջ 91–111։ Հայաստանի Հանրապետության եւ Գերմանիայի փոխհարաբերությունները 1918 թ. հունիս–հուլիս ամիսներին, 2007, թ. 5, էջ 120–139։ Յ. Լեփսիուսի մարդասիրական եւ հասարակական-քաղաքական գործունեության շուրջ ի հայտ եկող իրարամերժ տեսակետները՝ գիտական քննական լույսի ներքո, 2009, թ. 1, էջ 89–104։ Հայկական հարցը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թ. օգոստոսին, 2009, թ. 6, էջ 76–99։ Կարեն Յեպեն եւ Մեծ եղեռնի ընթացքում առեւանգված հայ երեխաների ու կանանց ազատագրումը, 2010, թ. 11, էջ 80–96։ Բաքվի 1918 թ. սեպտեմբերի հայկական ջարդերը գերմանա-թուրքական հարաբերությունների համատեքստում, 2011, թ. 2, էջ 50–59։ Յոհաննես Լեփսիուսի հայանվեր գործունեության շուրջ, 2011, թ. 4 էջ 47–74։ Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թ. աշնանը, 2012, թ. 2, էջ 28–44։ 1890-ական թվականների հայկական կոտորածները գերմանական հասարակական մտքի գնահատմամբ, 2012, թ. 4, էջ 29–59։ Յոհաննես Լեփսիուսը եւ հայ գործիչները, 2013, թ. 4, էջ 60–86։ Գերմանական արեւելյան առաքելության հայանվեր գործունեությունը Պարսկաստանում, 2017, թ. 11, էջ 78–102։ 1920 թ. թուրքական ներխուժման եւ Կարսի նահանգում տիրող իրադրության շուրջ, 2022, թ. 8, էջ 64–74, թ. 11, էջ 82–94։

*սին Կարեն Փահլեւանյանի[23], Էդիկ Մինասյանի[24], Հրանտ Աբրահամյանի[25], Հովհաննես Ջատիկյանի[26], Սամվել Պողոսյանի[27], Ավագ Ա. Հարությունյանի[28], Արմինե Ասատրյանի[29], Անի Ֆիշենկճյանի[30], Հրանուշ Սահակյանի[31] հոդվածները, որոնք շատ դեպքերում հետագայում ամբողջացվելով՝ հիմք են դարձել մենագրությունների համար:*

*Եւ վերջապես, ողջունելի եւ դրվատելի է ամսագրի «Հավելված» համարներում օտար լեզուներով թեմայի վերաբերյալ հոդվածների հրապա-*

---

*[23] Տե՛ս Հայ սպայության մասնակցությունը Առաջին աշխարհամարտի Գալիցյան ռազմական գործողությանը, 2011, թ. 1, էջ 90–100: Հայ զինվորականության մասնակցությունը Առաջին աշխարհամարտի Արեւելապրուսական ռազմական գործողությանը, 2011, թ. 7, էջ 61–70: Հայ զինվորականությունն Առաջին աշխարհամարտի Էրզրումի ռազմական գործողություններում, 2020, թ. 10, էջ 98–113:*

*[24] Տե՛ս Վասպուրականի հերոսամարտը 1915 թվականին, 2015, թ. 4, էջ 101–113: Դրվագներ 1918 թ. մայիսյան հերոսամարտերից, 2019, թ. 5, էջ 87–114: Ազատագրական պայքարի արտացոլումը հայ պարբերական մամուլում ԺԹ. դարի երկրորդ կեսին, 2019, թ. 10, էջ 93–114, թ. 12, էջ 103–121: Սեւրի պայմանագիրը եւ Հայաստանը, 2020, թ. 8, էջ 76–91, թ. 9, էջ 78–94:*

*[25] Տե՛ս Արցախի թեմը 1917–1920 թվականներին, 2004, թ. 9–10, էջ 111–124: Արցախի թեմը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914–1917 թթ.), 2005, թ. 7–8, էջ 144–147:*

*[26] Տե՛ս Խանասորի հերոս քահանան, 2003, թ. 7, էջ 80–84: Հայկական հարցի բոլշեւիկյան լուծումները (1921 թ. 16 մարտ – 13 հոկտեմբեր), 2012, թ. 4, էջ 79–82: Հայկական հարցը Պոտսդամի կոնֆերանսում, 2013, թ. 2, էջ 69–76: Անգլիայի թուրքամետ քաղաքականությունը Հայկական հարցում (1945–1948), 2015, թ. 1, էջ 92–100:*

*[27] Տե՛ս ՀԲԸՄ ստեղծումը եւ նրա հիմնադիր-նախագահը, 2006, թ. 1, էջ 92–101: Հայոց ցեղասպանության պատճառները եւ ընթացքը, 2006, թ.4, էջ 37–48: Կիլիկիան հայ գործիչների ծրագրերում Առաջին աշխարհամարտի տարիներին, 2014, թ. 8, էջ 99–126: Ֆրանսիայի հավակնությունները Կիլիկիայում Առաջին աշխարհամարտի տարիներին, 2015, 1, էջ 70–90: Հայկական զինուժի դերը Պաղեստինյան ռազմաճակատում, 2015, թ. 7, էջ 102–117:*

*[28] Տե՛ս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներպետական եւ դիվանագիտական գործունեությունը 1918–1920 թվականներին, 2002, թ. 5, էջ 96–115: Հայոց ցեղասպանությունն ու հայկական հարցը «Արարատ» ամսագրի էջերում, 2018, թ. 12, էջ 88–97: Սեւրի պայմանագիր. Անցյալը, կարգավիճակը, ապագան, 2020, թ. 8, էջ 92–111:*

*[29] Տե՛ս Արեւմտահայ գաղթականների բողոքագրերը Խրիմյան Հայրիկին, 2010, թ. 1, էջ 131–138: Տաճկահայ փախստականների խնդրագրերը, 2010, թ. 3, էջ 111–135: Ինչպես խափանվեց Սեւրի դաշնագիրը, 2011, 9, էջ 63–95: Նիկոլ Կարապետյան. Հայկական հարցի քառուղիներում, 2012, թ. 4, էջ 67–78: Ա. Սկաչկոյի «Հայաստանը եւ Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածի առթիվ, 2012, թ. 10, էջ 72–103:*

*[30] Տե՛ս Վերածնած հայություն – Տէր Զօր, 2019, թ. 4, էջ 122–134: Սուրիական Ճեզիրեն եւ նորագաղթ հայերը (Թէլ Պրագ), 2020, թ. 4, էջ 92–115:*

*[31] Տե՛ս Գերմանա-հայկական ընկերությունը եւ Դր. Լիպարիտի առաքելությունը, 2018, թ. 8, էջ 113–131: Մեծ եղեռնը եւ հայկական հարցը գերմանա-հայկական ընկերության հետպատերազմյան հրապարակախոսության մեջ, 2019, թ. 8, էջ 66–83: Գերմանա-հայկական ընկերության հայանպաստ գործունեությունը 1921–1922, 2020, թ. 9, էջ 122–131:*

րակումը[32], ինչն իհարկե ունի հայոց իրավունքների արտաքին քարոզչական կարեւոր նշանակություն:

Հետազոտականից զատ՝ ամսագիրը զգալի տեղ է հատկացնում այնպիսի գնահատելի գործոնի, ինչպիսին գրախոսությունն է: Անշուշտ, գրախոսությունների թե՛ որակը, թե՛ քանակը եւ թե՛ հատկապես գրախոսված աշխատությունների լայն ընդգրկումը վկայում են ամսագրի խմբագրության՝ թեմայի կարեւորության գնահատման մասին: Եւ, իհարկե, գրախոսությունների աշխուժացումը եւս պայմանավորված էր Գարեգին Բ. Վեհափառի գահակալությամբ:

«Էջմիածին» ամսագրի հետ համագործակցել է եւ շարունակում է համագործակցել գրախոսողների «հիմնական» անձնախումբ: Այսպես, նախ եւ առաջ, նշենք առավել ջանասեր գրախոսողների. Անի Խուդավերդյան[33], Վարուժան Պողոսյան[34], ինչպես նաեւ՝ Արթուր Անդրանիկյան[35], Դո-

[32] Օրինակ՝ տե՛ս 2022 թ. «Հավելված» համարում. Ա. ՀԱՅՐՈՒՆԻ, Հայոց ցեղասպանությունը որպես շարունակական հանցագործություն 1894–1923 թթ.: Համառոտ ակնարկ [գերմաներեն], էջ 97–120: Ա. ՖԻՇԵՆԿՃՅԱՆ, Հալեպի «Էլ Թագատտում» թերթի արձագանքները հայոց ցեղասպանության վերաբերյալ [արաբերեն], էջ 121–131: Ռ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Հայոց ցեղասպանության թեման թուրքական արդի գրականության մեջ [թուրքերեն], էջ 132–145: Իսկ 2024 թ. «Հավելված» համարում. Գ. ՄԵԼԻՔ-ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Ապազգայնացման եւ ցեղասպանության դատապարտման երկսայրի սուրը [ռուսերեն], էջ 104–122: Ք. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Գրականությունը որպես ցեղասպանության վավերագիր (Վարուժան Ոսկանյանի «Շշուկների մատյանը» գրքի օրինակով) [անգլերեն], էջ 123–135:

[33] Տե՛ս Թե ինչպես «Արյունից կարմրած գետը…», 2013, «Էջմիածին», թ. 4, էջ 137–139: 1917 թ. եկեղեցական համագումարը, 2018, թ. 6, էջ 142–146: «Բարեփոխում» եւ «ճնշել» եզրույթները թուրքերեն գրեթե նույն կերպ են հնչում, 2019, թ. 4, էջ 155–162: Թուրքը միայն մեկ բան կարող է անթերի կերտել՝ «Ջուգահեռ ճշմարտություն», 2019, թ. 7, էջ 141–146: Դարով չափվող մեկ նպատակ՝ զինել Անդրկովկասի մահմեդականներին եւ կատաղորեն պայքարել քրիստոնեության դեմ, 2019, թ. 9, էջ 145–151: Կարինից մինչեւ Բաքու՝ հայը միայնակ էր տաճկական արհավիրքի դեմ, 2020, թ. 5, էջ 139–146: Կոմիտաս վարդապետ՝ աստվածսիրության եւ հայրենասիրության մեծ օրինակ, 2021, թ. 4, էջ 145–149: Բաղձալի անկախություն՝ աշխարհաքաղաքական բարդագույն թնջուկի պայմաններում, 2023, թ. 6, էջ 153–159:

[34] Տե՛ս Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված եւս մեկ ուսումնասիրություն, «Էջմիածին», 2005, թ. 4, էջ 155–160: Մեծ եղեռնին նվիրված մի նոր կարեւոր սկզբնաղբյուր, 2007, թ. 4, էջ 97–105: Կարեւոր վավերագրեր Մեծ եղեռնի մասին, 2008, թ. 4, էջ 94–104: 1895, Massacres d’Armeniens, 2010, թ. 10, էջ 141–146:

[35] Տե՛ս Ցեղասպանության հոգեցնցման հետեւանքները, «Էջմիածին», 2007, թ. 4, էջ 106–110: Զիվան Արիստակեսյանի ոդիսականը, 2008, թ. 4, էջ 114–120:

*րա Սաքայան[36], Ավագ Ա. Հարությունյան[37], Վահան Սաղաթելյան[38], Յուրի Հովհաննիսյան[39], Երվանդ Պետրոսյան[40]: Հավելենք, որ բավականին մեծ է մեկական գրախոսականներով հանդես եկած հեղինակների թիվը[41]:*

*Իհարկե, ոչ պակաս կարեւոր հանգամանք է Գարեգին Բ. Վեհափառի գահակալության շրջանում թեմայի վերաբերյալ արժեքավոր աշխատությունների ու փաստաթղթերի ժողովածուների հրատարակման փաստը: Ինչ խոսք, նաեւ առարկայական պատճառներով նախորդ տասնամյակների ընթացքում նման հրատարակությունները կամ բացառվում էին, կամ էլ եզակի բնույթ էին կրում: Եւ ահա Գարեգին Բ. Վեհափառի հայրապետության օրոք սկսվեց եւ հաջողությամբ շարունակվում է ակադեմիական եւ աղբյուրագիտական կարեւոր նշանակություն ունեցող բազմաթիվ հրատարակությունների անվերջ շարքը: Անշուշտ, Մայր Աթոռը լինելով ոչ ակադեմիական հաստատություն, այդուհանդերձ, հովանավոր ու զորավիգ եղավ թեման ուսումնասիրող բազմաթիվ գիտականների հետազոտությունների հրատարակմանը: Իհարկե, չհավակնելով ամբողջական*

---

[36] *Տե՛ս Վիլհելմ Բաումը Թուրքիայում ազգային փոքրամասնությունների մասին, «Էջմիածին», 2009, Թ. 12, էջ 96–97: Թուրքիոյ մէջ Թէոդիկի «Յուշարձան Ապրիլ 11-ին» գրքի նոր երկլեզու հրատարակութիւնը, 2010, Թ. 1, էջ 152–153:*

[37] *Տե՛ս Մատենագիտական կոթողային աշխատանք, «Էջմիածին», 2001, Թ. 4, էջ 65–69: Վաղուց սպասված մեծարժեք ժողովածու, 2021, Թ. 6, էջ 162–169:*

[38] *Տե՛ս Մղձավանջի վերափոխված իրականությունը կամ՝ Մեծ եղեռնի փաստը վերահաստատող անհրաժեշտ գրքեր, «Էջմիածին», 2011, Թ. 7, էջ 121–136: Բորենիների խրախճանքը, 2012, 4, էջ 109–122:*

[39] *Տե՛ս* Վ. ԲԱՈՒՄ, *Թուրքիան եւ նրա քրիստոնյա փոքրամասնությունները, «Էջմիածին», 2011, Թ. 6, էջ 125–143, Արդարության ձայնն ընդդեմ քաղաքական շահի, 2012, Թ. 1, էջ 120–135:*

[40] *Տե՛ս «Շչուկների մատյան»-ի մասին՝ բարձրաձայն, «Էջմիածին», 2013, Թ. 4, էջ 128–136: Անտարբերությանը՝ ոչ, 2014, Թ. 5, էջ 138–153:*

[41] *Տե՛ս* Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ, *Էմմա Կոստանդյան, Մկրտիչ Խրիմյան, «Էջմիածին», 2000, Թ. 6, էջ 105–110:* Ա. ՂԱԶԻՅԱՆ, *Արցախի հոգեւոր թեմի պատմությունը վավերագրերում, 2001, Թ. 12, էջ 102–108:* Է. ՄԻՆԱՍՅԱՆ, *Նոր գիրք Արցախի նորագույն պատմության մասին, 2008, Թ. 11, էջ 131–133:* Վ. ՄԱՂԱԼՅԱՆ, *Մեծ եղեռնից մազապուրծ երզնկացիների տոհմագիրքը, 2009, Թ. 10, էջ 123–131:* Ա. ՄԱԴՈՅԱՆ, *Ցեղասպանագիտութիւն, 2010, Թ. 4, էջ 116–121:* Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Նոր գիրք ցեղասպանության մասին, 2010, Թ. 7, էջ 135–140:* Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, *Հայագիտությունը հարստացնող կարեւոր ուսումնասիրություն, 2012, Թ. 12, էջ 125–127:* Ռ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, *Կարեւոր հետազոտություն հայ հերոսուհիների վերաբերյալ, 2017, Թ. 12, էջ 143–148:* Վ. ՎԻՐԱԲՅԱՆ, *Արժեքավոր աշխատություն Վան-Վասպուրականի 1908–1918 թթ. պատմության վերաբերյալ, 2018, Թ. 10, էջ 143–150:* Կ. ՄԿՐՏՉՅԱՆ, *Համակողմանի անդրադարձ Միջագետքյան հայ գաղթավայրին, 2020, Թ. 11, էջ 130–138:* Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, *Ցեղասպանության հանցագործությունները վաղեմության ժամկետ չունեն, 2024, Թ.4, էջ 150–169:* Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Մենագրություն հերոսական գյուղի մասին, 2023, Թ. 5, էջ 146–151:*

*պատկերի վերհանման, այստեղ պարզապես ներկայացնենք Գարեգին Բ. Վեհափառի գահակալության շրջանում հրատարակված որոշ հրատարակությունների հետեւյալ ցանկը.*

*1. Աբրահամ եպս. Մկրտչյան, Հայ Եկեղեցին թշնամիների դեմ պայքարի հարցում: Գորիս, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2000:*

*2. Հր. Աբրահամյան, Արցախահայության հասարական-քաղաքական կյանքը եւ Արցախի թեմը (1901–1933): Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2009:*

*3. Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկությունները: Հրատ. պատր. Գ. Տեր-Վարդանյանը: Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2015:*

*4. Շ. Խաչատրյան, Կրոնի դերը Հայոց ցեղասպանության իրագործման մեջ: Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2020:*

*5. Կարգ սրբադասման Հայոց ցեղասպանության նահատակաց: Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2015:*

*6. Ավագ Հարությունյան, Հայոց ցեղասպանություն եւ հայկական հարց. Գրքերի մատենագիտություն (1860–2010): Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2014:*

*7. Ավագ Հարությունյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հասարակական եւ դիւանագիտական գործունեությունը (1918–1920): Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2018:*

*8. Ավետիս Հարությունյան, Վան-Վասպուրականի կրոնամշակութային կյանքը եւ պետականության ստեղծման փուլերը (1908–1918): Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2018:*

*9. Վ. Հարությունյան, Արցախի աստղերը ռազմական գիտությունների երկնակամարում: Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2000:*

*10. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը առաջին աշխարհամարտի եւ Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին (1914–1920): Փաստաթղթերի ժողովածու, հտ. Ա–Բ: Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2018:*

*11. Վ. Մելիքյան, Ս. Էջմիածնի 1917 թ. եկեղեցական համագումարը: Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին», 2018:*

*12. Խոսրով քհնյ. Շաքարեան, Յիշատակարան կամ ընտանեկան արձանագրութիւն վանեցի Շաքարեան տան: Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին», 2004:*

*13. Ե. Շիրակյան, Վազգեն. Մի ջահակիր Վանի հերոսամարտյանում: Վանի հերոսամարտը: Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2015:*

*14. Ս. Էջմիածինը եւ Հայոց ցեղասպանությունը: Կազմ. եւ հրատ. պատր. Ավագ Հարությունյանը: Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2010:*

*15. Ստեփան Կերտող [Ստեփանյանց], Հայ Առաքելական Եկեղեցին առաջին աշխարհամարտի տարիներին: Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2003:*

*16. Ա. Տիգրանեան, Արցախի քրիստոնէական ժառանգութեան ոչնչացման եւ բռիւրացման ադրբեջանական քաղաքականութիւնը: Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2023:*

*17. Ցեղասպանագիտական գրականություն: «Վաչե եւ Թամար Մանուկյան մատենադարան»: Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2015:*

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Գարեգին Բ. Ներսիսյան Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության տարիներին Մայր Աթոռը եւ գլխավորապես Հայրապետը դարձան հայության ոչ միայն հոգեւոր, այլեւ համազգային այն կարեւորագույն խոսնակը, որ թե՛ Հայոց ցեղասպանության ոգեշնչման, միջազգային ճանաչման ու դատապարտման, թե՛ Հայ դատի ու Արցախ աշխարհի իրավունքների պաշտպանության հարցերում մշտապես հետեւողականորեն իրենց ազդեցիկ ու հեղինակավոր խոսքն են ասել եւ հետամուտ եղել:*

*Մայր Աթոռ Ս. Էջմիածինը դարձավ ոչ միայն ընդհանրական հայագիտական, այլեւ կարեւորագույն ցեղասպանագիտական կենտրոններից մեկը՝ ի դեմս «Էջմիածին» ամսագրի եւ Մատենադարանի բազմաթիվ հրատարակությունների, որոնք անշուշտ բեղուն շարունակական ընթացք ունեն: Թեմայի վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր աշխատություններ ու փաստաթղթերի ժողովածուներ հրատարակվեցին եւ շարունակվում են հրատարակվել: Անշուշտ, առարկայաբար այս փաստն աննախադեպ էր եւ պայմանավորված էր Գարեգին Բ. Վեհափառի հայրապետական հոգացությամբ: Գարեգին Բ. Վեհափառի գահակալության օրոք Մայր Աթոռը դարձավ քննարկվող թեմայի հետազոտողների հովանավորն ու աջակիցը:*

*«Էջմիածին» ամսագիրը խմբագրականներում հետեւողական քարոզեց Հայոց ցեղասպանության ոգեկոչման ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերը: Ամսագրում հրատարակված մի քանի տասնյակ հեղինակների*

*բազմաթիվ արժեքավոր հետազոտությունները, գրախոսականները կարեւոր դերակատարություն ունեցան Հայոց ցեղասպանության եւ Հայկական հարցի պատմության համակողմանի ուսումնասիրության ու հանրայնացման ասպարեզում:*

*Գարեգին Բ. Վեհափառի կոնդակները, ուղերձներն ու ելույթները պարտավորեցնող, հոգեւոր-բարոյապես ոգեկոչող եւ հուսատու ուղենիշ եղան ժամանակի ազգային-պետական կառույցների եւ հայության համար:*

*Շարունակելով Մայր Աթոռի որդեգրած կառուցողական հայրենանպաստ եւ ավանդական դարձած կեցվածքը, Գարեգին Բ. Վեհափառը միջազգային տարբեր եկեղեցական-դիվանագիտական ու գիտական կարեւոր նշանակության հարթակներում մշտապես իր խոսքով զորավիգ եղավ Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման ու դատապարտման գործընթացին, այդ հարցում հայրապետական աջակցությունը բերելով Հայաստանի Հանրապետության դրսեւորած ջանքերին:*

## ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ցեղասպանության ոգեկոչում, ցեղասպանագիտական հարթակ:

## РЕЗЮМЕ


В патриотической деятельности Католикоса Всех Армян Гарегина II Нерсисяна особое место занимает его позиция в вопросе Геноцида армян. Католикос Гарегин II рассматривает Геноцид армян и Армянский вопрос с историко-политической и общечеловеческой точки зрения, исторически четко охарактеризовал виновников геноцида, причины и последствия, дал политическую оценку Армянскому вопросу, придал особое значение требованию установления справедливости, подчеркнул необходимость осуждения геноцида.

Католикос Гарегин II последовательно поддерживал Республику Армения в ее политике признания и осуждения Геноцида армян на международных церковных и дипломатических аренах, выступал с влиятельными речами на престижных международных мероприятиях, используя эти высокие трибуны для агитации признания Геноцида армян, а также для оценки всех инициатив, связанных с международным признанием Геноцида армян.

Католикос Гарегин II высоко ценит ученых, внесших большой вклад в исследовании геноцида. Во время его правления журнал «Эчмиадзин» стал важным научным изданием по изучению геноцида. Ценность представляют исследования, мемуары и рецензии по методологическим, правовым и источниковедческим аспектам геноцида, истории Армянского вопроса, освободительной борьбы и ее деятелям.

В годы правления Католикоса Гарегин II были опубликованы ценные труды и сборники документов по истории Геноцида армян и Армянского вопроса.

## SUMMARY

In the patriotic activities of His Holiness Karekin II Nersisyan, Catholicos of All Armenians, his position on the Armenian Genocide occupies a special place. Catholicos Karekin II viewed the Armenian Genocide and the Armenian Question from a historical, political, and universal human perspective, clearly characterized the perpetrators of the genocide, its causes and consequences, gave a political assessment of the Armenian Question, attached particular importance to the demand for justice, and emphasized the need to condemn the genocide.

Catholicos Karekin II consistently supported the Republic of Armenia in its policy of recognition and condemnation of the Armenian Genocide in international ecclesiastical and diplomatic arenas, delivered influential speeches at prestigious international events, using these high-profile platforms to campaign for recognition of the Armenian Genocide, as well as to evaluate all initiatives related to the international recognition of the Armenian Genocide.

Catholicos Karekin II highly values scholars, who have made significant contributions to genocide research. During his reign, “Etchmiadzin” journal became an important academic publication on the study of genocide. Of particular value are studies, memoirs, and reviews on the methodological, legal, and source-related aspects of genocide, the history of the Armenian Question, the liberation struggle, and its leaders.

During the reign of Catholicos Karekin II, valuable works and collections of documents on the history of the Armenian Genocide and the Armenian Question were published.